

Շ. Շահնագություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐԶՆՑԻՆ ԵՎ ԻՐ ՍԱՀՄՈՍԱՐԱՆԸ

Առաջին հայերեն գիրքը՝ Պարզատոմարը հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտը տպագրեց 1512 թ. Վենետիկում: Ապա Աբգար դպիրը շարունակող հանդիսացավ այդ գործի և 1565 թ. տպագրեց մի Սաղմոսարան: Հայ գրքի տպագրության հաջորդ նախահայրը Հովհաննես Տերզնցին է:

Խանեսի և Մարիամի որդի «ուսյալ քահանա» Հովհաննես Տերզնցին ծնվել է Տիգրանակերտում: Նա 1583 թ. այդի և չքավոր վիճակում իր որդի խաչատուրի հետ հայ տպագրության գործով զբաղվելու նպատակով մեկնում է Հռոմ: Այստեղ նա հանդիպում է Աբգար դպրի որդուն՝ Սուլթանշահին, որի հետ ընկերանալով, իտալական մի տպարանում 1584 թ. տպագրում է Գրիգոր 13-րդ պապի լատիներեն զրված տոմարի հայերեն թարգմանությունը «Տամար Գրիգորիեան» Զաւիտենական...» վերնագրով: Իտալական այս տպարանը, ըստ երևույթին, հարուստ փորձ ու հնարավորություններ ունեցող մի աշխատանոց էր, որի շնորհիվ էլ Գրիգորյան տոմարը շնորհքով, սև ու կարմիր թանաքով, զարդագրերով, զարդափակ էջերով հաջող տպագրություն է: Դրանից բարեբախտաբար 2 օրինակ պահպանվել է Մատենադարանի հնատիպ գրքերի շարքում (Հնատիպ դրականության հավաքածու № 29, 30): Այդ տոմարից չկա Հայաստանի որևէ այլ գրադարանում:

Այս տոմարը տպագրելուց հետո Հովհաննես Տերզնցին ցանկանում է հայերենի վերադառնալ, բայց անհասկանալի պատճառով ճանապարհորդության քսաներորդ օրը նրան ձերբակալում են և բանտարկում: Թեոդիկը ենթադրում է, թե նրան բանտարկել են այն մեղադրանքով, որ փորձել է իր ձեռք բերած նոր արհեստը հայերենի տեղափոխել¹: Ոմանք նրա բանտարկությունը համարում են թյուրիմացություն, որովհետև կարճատև ժամանակամիջոցի հետո նա ազատվում է բանտից և Վենետիկում ազատ աշխատելու իրավունք է ստանում: Նա Վենետիկում իր որդի խաչատուրի հետ նորից զբաղվում է իր սիրած գործով և Ջուան Ալբերտի տպարանում տպագրում է մի Սաղմոսարան:


Տպագրության տեսակետից վերին աստիճանի աղքատ, բայց հետաքրքրական նմուշ է այս Սաղմոսարանը: Իր տառանիչերով, տպագրության արվեստով, էջերի ձևավորումով, կազմով այն շատ նման է ձեռագրի: Այդ տպագրությունը ցույց է տալիս, թե ինչպիսի անհարմար ու ծանր պայմանների հաղթահարումով է լույս տեսել: Դա նկատելի է անկանոն էջերից, տառերի դասավորումից, թանաքի գույնից, լուսանցքների անհամաչափությունից: Գրքի մամուլները բաղկացած են 8-ական թերթից, որոնք համարակալվում են հայկական, իսկ մամուլի էջերը լատիներական տառերով:

¹ Թ և ո գ ի կ, Տիպ ու տառ, 4. Պուլխ, 1912, էջ 42:


Հովհաննես Տերզնցու տպագրած այս Սաղմոսարանը շատ հազվագյուս պիրք է, որից չկար Հայաստանի որևէ գրադարանում: Ի. Լևոնյանը գրում է. «Մենք այս հրատարակությունը (Տերզնցու Սեղմոսարանը.—Շ. Շ.) չենք տեսել, հետևապես չպետք է կարողանանք խոսել նրա պոլիգրաֆիական արժեքի մասին: Արդյոք Աբգարի թողած տառերն են օգտագործված... թե՛ նոր տառեր են ձուլված, հայտնի չէ»:

Տերզնցու և Աբգար դպրի Սաղմոսարանների տառատեսակների բաղդատությունը մեզ բերեց այն եզրակացության, որ դրանք տպագրվել են բոլորովին տարբեր տառանիշերով: Առաջինը տպագրված է մանր, փոքրատառ և մեծատառ տպագիր գրերով, իսկ երկրորդը՝ խոշոր, ձեռագիր տառանիշերով:

Այդ բանում մենք համոզվեցինք, երբ Մատենադարանի գրադարանը ունեցավ Տերզնցու Սաղմոսարանից մի օրինակ և ահա թե ինչպես:



Նկ. 1. Սաղմոսարանի «Ժզ» մամուլի
7-րդ էջը



Նկ. 2. Սաղմոսարանի «դ» մամուլի
2-րդ էջը

Արժանահիշատակ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը կտակ էր թողել իր անձնական արխիվը հանձնել Մատենադարանին: Նրա արխիվի հետ հանձնվեց նաև մի հնատիպ գիրք, որի «բ» մամուլի 4-րդ էջին և «գ» մամուլի 3-րդ էջին դրոշմված է ակադեմիկոս Մանանդյանի անձնական կնիքը:

Գիրքը թերթերով պարզեցինք, որ Սաղմոսարան է, բայց տպագրության թվականը, վայրը, տպագրիչի ով լինելը պարզելու համար պահանջվեց երկար մամանակ, որովհետև գիրքը թերի էր թե՛ սկզբից և թե՛ վերջից: Նա սկսվում է «բ» մամուլի 3-րդ էջով, այսինքն 19 էջից և վերջանում է «իբ» մամուլի 4-րդ էջով, չունի տիտղոսաթերթ և վերջին էջերի բացակայության պատճառով չկա

2 Գ. Լևոնյան, Հայ դիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 73—74:

տպագրիչի հիշատակարանը, որ ձեռագրերի նմանությամբ սովորաբար լինում է հնատիպ գրքերի վերջին էջի վրա:

Գրքի մանրագնին հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց պարզելու, որ դա հենց Հովհաննես Տերզնցու տպագրած Սաղմոսարանն է: Իրան նախ նպաստեց Տերզնցու և նրա որդու այն լուսանկարը, որ Գ. Զարպհանալյանը, Թեոդիկը, Գ. Լևոնյանը և մյուսները նկարագրելով Հովհաննես Տերզնցու Սաղմոսարանը, բերում են իրենց աշխատություններում: Նրա վերևի մասում փոքրատառ և մեծատառ տառանիշերով տպագրված է. «Յիշա զմեզ տեր յորժամ գաս արքայութեամբ քո և ողորմեա մեզ—Տէր Հովհաննէս Տէրզնցին և որդին խաչատուրն ծառայք Աստուծոյ և յիշողացս: ՌԼԵ». իսկ ցածում՝ «փ» զարդագրով «Յիշատակարան է սակաւիկ. փառք ամենասուրբ երյսր թէ (երրորդութեան) հօր և ...»:

Այդ հիշատակարանների տառանիշերը և զարդագիրը մենք համեմատեցինք Մատենադարանին հանձնված Սաղմոսարանի տառանիշերի ու «փ» զարդագրի հետ և գտանք, որ դրանք նույնն են: Ապա ուսումնասիրելով հիշյալ Սաղմոսարանը մենք հանդիպեցինք երկու փոքրիկ հիշատակագրությունների:

Ո՛ր հրատարակած գրքերի զանազան էջերի վրա Հովհաննես Տերզնցին ձեռագիր արտագրող գրիչների նմանությամբ, սովորություն ուներ մանր հիշատակագրություններ գրելու (այդ բանը առաջին անգամ նկատեցինք «Տոմար Գրիգորյանը» թերթիկի)³: Եվ ահա Սաղմոսարանի մեջ ևս պահպանվել են նման մի քանի հիշատակարաններ: Գրքի «զ» մամուլի 2-րդ էջում, գլխազարդից էլ վեր, տպագրված է հազիվ նկատելի հետևյալ հիշատակարանը. «Մեղաւոր Տէրզնցին յիշա ի տէր», իսկ «ժզ» մամուլի 7-րդ էջի տեքստի տակը տպագրված է. «Մեղաւոր Տէրզնցին



Նկ. 3. Հովհաննես Տերզնցին իր որդի՝ խաչատուրի հետ

յիշեա ի տէր աստուած, սիրելի և քաղցր եղբարք իմ և տէր մեր լիսուս քրիստոս»:

Մեր համեմատությունների արդյունքներն, առավել ևս այս երկու հիշատակարանները ապացուցեցին, որ Սաղմոսարանն իրոք Հովհաննես Տերզնցու տպագրածն է: Այն հավանաբար տպագրվել է Տերզնցու բանտից դուրս գալուց հետո:

Սաղմոսարանի տպագրությունն իրականացնելու համար նրան օգնում են վենետիկում բնակվող հայ խոջաները, ինչպես դա վկայում է Գ. Զարպհանալ-

³ «Տամար Գրիգորիան Յավիտենականց»-ը նույնչափ հազվագյուտ գիրք է: Այդ գրքի «բ» մամուլի 7-րդ էջում կա հետևյալ հիշատակարանը. «Եւ զիս զաշխատողս զտւր յովանէս տէրզնցին և զվերակացու գործոյս զպարոն սուլթանշահն Յազօթս ձեր սուրբ յիշման արծանի առնէք, աղաչեմք ըզ՛նեզ»: «Ը» մամուլի 3-րդ էջին «Զթելագիրս զխաչիկն զորդիակս յիշեցէք ի տէր, ծառայս ձեր շտր յովհաննէս Տէրզնցին յիշեցէք ի տէր»: Նույն գրքի մի այլ ուշագրով հիշատակարանում գրված է. «Զփծուն զրիս զտւր Յովհաննէս Տէրզնցիս զգեխալոս մեղօք մի ողորմայիւ արծանի առնեք զձեզ աղաչեմք»:

յաճար. «Հոռվմէն ի Վենետիկ անցավ Տէրզցին և հոն ազգային վաճառականաց խնդիրքով «Սաղմոսարան» մը տպագրեց (1587) նորաձոյլ տառերով, որոնք առաջիններէն աւելի գեղեցկութիւն մը շունչէին իրենց ձևոցը և արուեստին մեջ»⁴: Եվ իսկապէս Տերզնցու տպագրած Գրիգորյան տոմարը շատ ավելի հաջող ու գեղեցիկ տպագրութիւնն է: Կարելի է ասել, որ Աբգար դպրի 1565 թ. տպագրած Սաղմոսարանն էլ, ինչպէս և Հակոբ Մեղապարտի Վենետիկում տպագրած հինգ գրքերը շատ ավելի հաջող տպագրութիւններ են, քան Տերզնցու Սաղմոսարանը⁵:

Գ. Զարպհանալյանը մի հատված է բերում այս Սաղմոսարանի նկարի տակը զետեղված այդ հիշատակարանից: Դրանից, մենք իմանում ենք, որ գիրքը լույս է տեսել Վենետիկում, 1587 թվականին, չուան Ալբերտի տպարանում. «... Աւարտեցաւ գիրքս ձեռամբ տէր Յովհաննէս Տէրզնցույս և որդւոյ իմոյ նաշատուրին ի Բվին Ռւզ (1587) ի մայրաքաղաքն Վենետիկ ... ի բանատուն (պասմատուն)⁶ Զուան Ալբերթին. ձեռնատուր խոճայ... Զողեցոց...»: Գ. Զարպհանալյանը և մեր մյուս մատենագետները (Վ. Զարգարյան, Գ. Լևոնյան, Թեոդիկ) ոչ մի բան չեն ասում մեր նկատած հիշատակարանների մասին: Դժվար է ասել, թե նրանք այդ հիշատակարանները չեն նկատել, ինչպէս և դժվար է ենթադրել, թե նրանք ավելորդ են համարել այդ կարևոր վկայութիւնները:

Այդ վերին աստիճանի ուշագրավ ու հազվագյուտ գիրքը առանձին խնամքով պահվում է Մատենադարանում, հնատիպ գրքերի հավաքածուի 1318 համարի տակ⁷:

4 Գ. Զարպհանալյան, Պատմութիւն հայերեն դպրութեան, հ. ք, Վենետիկ, 1878, էջ 281:

5 «Պարզատոմար», 1512, Աղթարք, 1513, Տաղարան, 1513, Ուրբաթագիրք, 1513 և պատարագատետր 1513:

6 Տպագրութեան սկզբնավորման ժամանակ տպարանը անվանվում էր բանատուն, պասմատուն, գործարան տպագրութեան, իսկ տպագրել քառի փոխարեն գործ էին ածում շինեցավ, ավարտեցավ, կազմեցավ, ի հայտ բերվեց և այլն:

7 Լոնդոնի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր չուիկահար Մանուկ Բարիկյանից վերջերս ստացված տեղեկութեան համաձայն, այդ Սաղմոսարանից մեկ օրինակ պահպանվում է Բրիտանական թանգարանի գրադարանում: